Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1953 ապրիլ 16 Երևանում մահացավ ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը: (Ծնվ. 1876թ.-ին):

ապրիլ 18 Վերացվում են Երևանի, Կիրովականի և Լենինականի օկրուգները:

ապրիլ 26 Ավարտվում է Գյումուշի հիդրոէլեկտրակայանի առաջին հերթի շինարարությունը:

1954 մարտ 15 Հայաստանի կոմերիտականների առաջին խումբը մեկնում է Ղազախստան՝ մասնակցելու խամ ու խոպան հողերի յուրացման համաժողովրդական գործին:

մարտ 23 Երևանում բացվում է Հայաստանի գյուղական բժիշկների հանրապետական համագումարը:

օգոստոս 1 Մոսկվայում վերաբացվում է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը:

1955 փետրվար 8 Երևանում վերսկսվում է քրդական «Ռյա թազա» թերթի հրատարակությունը:

մարտ 3 ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Հովհաննես Իսակովին շնորհվում է Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում և հանձնվում է «Մարշալական աստղ» տարբերանշան:

մարտ 6 Տեղի են ունենում Հայկական ԽՍՀ չորրորդ գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները:

մարտ 11 ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բանակի գեներալ Հովհաննես Բաղրամյանին շնորհվում է Խորհրդային Միության մարշալի կոչում:

հունիս 7 Վերսկսվում է «Սովետական արվեստ» ամսագրի հրատարակությունը:

հուլիս 3 Կրասնոդարի երկրամասի Վերխնե-Բականսկ բանավանում տեղի է ունենում Խորհրդային Միության հերոս Հունան Ավետիսյանի և նրա մարտական ընկերների գերեզմանի վրա կանգնեցված հուշարձանի հանդիսավոր բացումը:

1956 մայիս 12 Հրազդանի մեծ կամուրջի հանդիսավոր բացումը (Երևան):

հունիս 1 Մոսկվայում բացվում է հայկական արվեստի և գրականության տասնօրյակը:

հուլիս 22 Շահագործման է հանձնվում Երևանի կայարանի նոր շենքը:

սեպտեմբեր 6 Սկսվում է Երևան և Կիև քաղաքների սոցիալիստական մրցություն:

սեպտեմբեր 19 Բյուրականի աստղադիտարանի հանդիսավոր բացումը:

դեկտեմբեր 6 Երևանում մահացավ հայ ականավոր գրող, ակադեմիկոս Դերենիկ Դեմիրճյանը: (Ծնվ. 1877թ.-ին):

1957 ապրիլ 17 Սկսվում է Կիրովական և Բաթումի քաղաքների սոցիալիստական մրցությունը:

հունիս 6Ստեղծվում է ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության խորհուրդ՝ ժողտնտխորհ:

հունիս 12 Ծնվեց ԼՂՀ Մարտունու շրջանի ճակատի հրամանատար Մոնթե Մելքոնյանը: (Վախճ. 1993թ.-ին):

հուլիս 3 ՀԽՍՀ ժողտնտխորհին առընթեր ստեղծվում է լեռնամետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտ:

հուլիս 10 ՀԽՍՀ ժողտնտխորհին առընթեր ստեղծվում է քիմիայի գիտահետազոտական ինստիտուտ:

հուլիս 24 ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդին առընթեր ստեղծվում է ռադիոհաղորդման և հեռուստատեսության պետական կոմիտե:

հոկտեմբեր 17 Երևանում մահացավ մեծանուն գրող Ավետիք Իսահակյանը (Ծնվ. 1875թ.-ին):

նոյեմբեր 17 Շահագործման է հանձնվում Երևան-Ախտա (այժմ Հրազդան) երկաթուղագիծը:

1958 հունվար 1 Ստեղծվեց Եվրոպական միությունը (Հռոմի Դաշինք):

մարտ 3 ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդի որոշմամբ Մատենադարանը վերակազմվում է գիտահետազոտական ինստիտուտի:

ապրիլ 1 Երևանում կազմակերպվում է գյուղատնտեսության էկոնոմիկայի ու կազմակերպման գիտահետազոտական ինստիտուտ:

ապրիլ 18 Կազմակերպվում է ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտը:

մայիս 8 Բացվում է Հայաստանի արհմիությունների VIII համագումարը:

սեպտեմբեր 1 ՀԽՍՀ գյուղատնտեսության մինիստրությանն առընթեր կազմակերպվում է հողագործության և ագրոքիմիայի գիտահետազոտական

սեպտեմբեր 2 Սկսվում են ԽՍՀՄ Լենինի շքանշանակիր պետական ակադեմիական Մեծ թատրոնի հյուրախաղային ներկայացումները Հայաստանում:

սեպտեմբեր 14 Շահագործման է հանձնվում Կոտայքի ջրանցքը:

հոկտեմբեր 3 Բրյուսելի համաշխարհային ցուցահանդեսի խորհրդային տաղավարում կազմակերպվում է Հայկական ԽՍՀ օր:

նոյեմբեր 2 Արզնի-Շամիրամ ջրանցքի առաջին հերթի հանդիսավոր բացումը:

նոյեմբեր 5 Գործարկվեց Աբաբեկյանի հիդրոէլեկտրակայանը:

դեկտեմբեր 2 Երևանում հիմնվում է սովետա-բուլղարական բարեկամության ընկերության հայկական բաժանմունք:

դեկտեմբեր 3 Երևանի կայարանամերձ հրապարակում տեղի ունեցավ «Սասունցի Դավիթ» արձանի հանդիսավոր բացումը:

դեկտեմբեր 9 Լենինգրադում մահացավ ականավոր ֆիզիոլոգ, ակադեմիկոս Լևոն Օրբելին: (Ծնվ. 1882թ.-ին):

1958 դեկտեմբեր 31 Երևանում լույս է տեսնում «Լիտերատուրնայա Արմենիա» ամսագրի առաջին համարը:

(Շարունակելի)

ԱՐԳԵՆՏԻՆԱՆ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2006 Նոյեմբերի 29-ին Արգենտինայի խորհրդարանը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը: Ֆրանսիայից մեր հայրենակից Ժան Էսքիյանի տեղեկացմամբ, 173 կողմ, 2 ձեռնպահ քվեարկությամբ Արգենտինայի խորհրդարանն ընդունել է օրենքը, այդ կերպ դառնալով հարավամերիկյան երկրորդ երկիրն Ուրուգվայից հետո, որ 20-րդ դարասկզբի Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած ողբերգությունը ճանաչել է որպես ցեղասպանություն: Օրենքը հնարավորություն է տալիս պետական հաստատությունների հայազգի աշխատակիցներին եւ արգենտինական դպրոցների հայազգի աշակերտներին ապրիլի 24-ին ազատ լինել՝ նշելու Մեծ եղեռնի զոհերի հիշատակը:

Հարավամերիկյան երկրներից Ուրուգվայը ցեղասպանության օրենք ընդունել է 2004 թ. մարտի 26-ին, իսկ Ուրուգվայի Սենատն ու Ներկայացուցիչների պալատն ընդունել էին հայտարարություն դեռեւս 1965 թ. ապրիլի 20-ին: Արգենտինայում հայերի ցեղասպանությունը դատապարտող որոշում կայացրել է երկրի Ազգային կոնգրեսը 1985 թ. ապրիլի 23-ին: Այդ ժամանակ Արգենտինայի արտգործնախարարությանը հանձնարարվեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը նպաստող քաղաքական կուրս վարել: Արգենտինայի Սենատը եւս մեկ հայտարարություն է ընդունել 2003 թ. օգոստոսի 20-ին՝ վշտակցություն հայտնելով 1915-23 թթ. մեկուկես միլիոն հայերի ցեղասպանության 88-րդ տարելիցի առնչությամբ, մերժելով ազգային, էթնիկ եւ այլ խմբերի ցեղասպանության բոլոր ձեւերը եւ դատապարտելով մարդկության դեմ անպատիժ մնացած բոլոր հանցագործությունները:

Նինոծմինդայի շրջանային մշակույթի ծառայությունը փորձում է վերականգնել մոռացված մշակույթը

Ախալքալաք. 01. Դեկտեմբերի “Շատ ծանր հեղափոխություն ենք սկսել, որովհետև մշակույթը, արվեստը միշտ երկրորդ պլան մղված բնագավառ է եղել: Բայց կա մի հավերժական բարոյականություն՝ ազգերը տարբերվում են իրենց լեզվով և մշակույթով: Ժողովուրդն ինքը պիտի ցույց տա իր ազգային արմատները”,- հայտնեց Նինոծմինդայի շրջանային մշակույթի ծառայության պետ Գևորգ Սնխչյանը:

Գ. Խնխչյանի խոսքերով, ժողովրդական արվեստ կլինի այն դեպքում, երբ ժողովուրդն ինքը՝ մեծից-փոքր դուրս գա բեմ՝ իր շնորհքը ցույց տալու:

Ինչպես հավաստեց մշակույթի ծառայության պետը, Նինոծմինդայի մշակույթի ծառայությունն իր առջև նպատակ է դրել վերականգնել մոռացված մշակույթը. “Սկսել ենք զրոյից, նյութատեխնիկական բազա բացարձակապես գոյություն չուներ: Շրջանային մշակույթի տունն իր կառուցման օրից, արդեն 20 տարի է անցել, ոչ մի անգամ չի վերանորոգվել, շատ անմխիթար վիճակում էր գտնվում մինչև օգոստոս”:

Շրջանային վարչության ֆինանսավորմամբ, ս.թ. օգոստոսից, երկու ամսվա ընթացքում հիմնարար վերանորոգման է ենթարկվել մշակույթի տան դահլիճը, կարգի են բերված ճեմասրահը, աշխատակազմի առանձնասենյակները:

“Ձգտում ենք, որ մշակույթի տունը դառնա իսկական մշակույթի օջախ, որտեղ երիտասարդները, բնակչությունը կարողանան գալ, իրենց հանգիստն անցկացնել”,- հայտնեց պրն. Սնխչյանը և տեղեկացրեց, որ արդեն ստեղծել են հայ ազգային երգի դպրոց, ասմունքի ստուդիա, աշխատում են երաժշտական խմբի կազմավորման վրա, իսկ առաջիկայում կլինի երգի-պարի ազգագրական համույթ՝ իր նոր պարուսույցով:

Մշակույթի ծառայության պետի հավաստմամբ, կարող են հիանալի երգարվեստ ստեղծել՝ վերականգնելով ազգային՝ Կարնո շուրջպարերը, ժողովրդական պարարվեստի ազգային՝ ջավախքյան ոճը, և փրկելով կործանումից ժողովրդական մանիները, որոնք միայն Ջավախքում են երգվել. ”Մենք առաջին հերթին պիտի զբաղվենք նրանով, ինչը որ մերն է”:
“Արվեստը մարդուն մոտեցնելու միջոցը միջոցառումն է, իսկ ինքնամաքրման ճանապարհով միայն արվեստագետը կարող է անցնել”,- ավելացրեց Գ. Սնխչյանը:

Ջավախք-ինֆո 01. 12. 06թ.

§ØÆ²êÜ²Î²Üæ²ì²Êø¦ ÄàÔàìð¸²ì²ð²Î²Ü¸²ÞÆÜøÆ ¸ÆØàôØ ÐÐ ¶àðÌ²¸Æð ºì úðºÜê¸Æð ÆÞÊ²ÜàôÂÚàôÜÜºðÆÜ

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը դիմում է ՀՀ իրավապահ մարմիններին՝ Վահագն Չախալյանի դեմ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու անհիմն մեղադրանքով հարուցված գործը անհապաղ կարճելու պահանջով: Ջավախքի ազգային գործչի դեմ քաղաքական հալածանքն անպատվաբեր է և անհանդուրժելի: Այն մեծապես քայքայում է ջավախահայության հավատն ու վստահությունը Հայրենի երկրի իշխանությունների հանդեպ և հեղինակազրկում ՀՀ արտաքին քաղաքականությունը՝ որպես Արցախի, Ջավախքի և սփյուռքահայության անվտանգության և ազգային իրավունքների պաշտպանության երաշխավորի:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը, արտահայտելով Ջավախքի ողջ բնակչության միահամուռ կամքը, պահանջում է վերանայել ՀՀ պետական սահմանի հատման և մաքսային ստուգումների անցկացման խստացված ռեժիմ պարտադրելու քաղաքականությունը: Դաշինքը խստագույնս պահանջում է վերջ դնել մաքսային անցակետում տիրող կաշառակերության և կեղեքումների մթնոլորտին: «Միասնական Ջավախքը» դատապարտում է Ջավախքը ՀՀ-ից արհեստականորեն մեկուսացնելու և օտարացնելու մաքսային կոռումպացված մարմինների նկրտումները:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը կոչ է հղում ՀՀ օրենսդիրներին՝ սեղմ ժամկետում պատրաստել և հաստատել Ջավախքի բնակչության համար ՀՀ պետական սահմանը հատելու և մաքսային ռեժիմի պարզեցված կարգի վերաբերյալ գործող օրենքի բարեփոխված տարբերակը:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինք
20.11.2006 թ.
ք. Ախալքալաք

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՋԱՎԱԽՔ» ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքը դատապարտում է հայաստանյան լրատվամիջոցների կրավորական և երկյուղած կեցվածքը Ջավախքում ընթացող քաղաքական զարգացումների լուսաբանման հարցում: Մենք պահանջում ենք դրսևորել քաղաքացիական վճռականություն, թոթափել լրագրողին անվայել երկչոտությունը և համարձակություն ցուցաբերել ջավախահայության իրավունքների և երկրամասի հայապահպանության համար մղվող պայքարի հանրության իրազեկման բնագավառում: Այսօր, նոյեմբերի 20-ին, ՀՀ Բավրայի սահմանակետի մոտ ջավախահայության բողոքի ցույցին վրացական և ռուսական հեռուստաընկերությունների ներկայության ֆոնին հայաստանյան հեռուստաընկերությունների և այլ լրատվամիջոցների բացակայությունը հնարավոր է բնութագրել միայն որպես բացարձակ, աններելի և անհանդուրժելի խայտառակություն:

«Միասնական Ջավախք» ժողովրդավարական դաշինքն իրազեկում է հանրությանը, որ այսօր, 2006 թ. նոյեմբերի 20-ին, հայ-վրացական միջպետական սահմանի ջավախքյան հատվածում թբիլիսյան իշխանությունների հրահանգով տեղակայվել է 100 –ի հասնող ոստիկանության հատուկ նշանակության ինքնաձիգներով զինված ջոկատ՝ ցույցի մասնակիցների ցուցադրական ստուգումն իրականացնելու նպատակով: Դաշինքը դատապարտում է վրացական իշխանությունների՝ ջավախահայությանը հրազենքի կիրառման ապառնալիքի և զանգվածային դատական հետապնդումների միջոցով ահաբեկելու անհեռանկար քաղաքականությունը և զգուշացնում հնարավոր բացասական հետևանքների մասին:

«Միասնական Ջավախք»
ժողովրդավարական դաշինք
20.11.2006 թ.
մ. Ախալքալաք

13,7 ՄԼՆ ԱՄՆ ԴՈԼԱՐԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՈՍՏՈՒՄ

Երեկ այս մասին հայտարարեցին Լոս Անջելես, Նյու Յորք, Փարիզ, Երեւան՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամը եւ աշխարհի մյուս անկյուններում իր 20 կառույցները: Հեռուստամարաթոնը հինգշաբթի օրը 12 ժամ շարունակ հեռարձակվեց ԱՄՆ-ի 20 խոշոր քաղաքներում եւ Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ: Այս տավա դրամահավաքը կրկնակի գերազանցեց նախորդ տարվա՝ 7,7 մլն ԱՄՆ դոլար արդյունքը:

Գումարները կօգտագործվեն «Արցախի վերածնունդ» ծրագրի՝ մասնավորապես Հադրութի շրջանի զարգացման նպատակով:

«Արցախի վերածնունդ» ծրագրի իրականացման համար կազմակերպված հեռուստամարաթոնի խոշոր նվիրատուներն են՝

«Լինսի» հիմնադրամ (ԱՄՆ արեւմտյան ափ)-2 մլն ԱՄՆ դոլար՝ Ղարաբաղում դպրոցների շինարարության համար:

«Project CURE» (ԱՄՆ արեւմտյան ափ)-2 մլն ԱՄՆ դոլար Ղարաբաղի հիվանդանոցներում բժշկական սարքավորումների եւ պարագաների ձեռքբերման համար:

Վահե Կարապետյան (ԱՄՆ արեւմտյան ափ)-1,5 մլն ԱՄՆ դոլար Ամարասի ճանապարհի կառուցման համար:

Ջերի Թուրփանջյան (ԱՄՆ արեւմտյան ափ)-1,25 մլն ԱՄՆ դոլար Ստեփանակերտի թիվ 11 դպրոցի կառուցման համար:

Արա Աբրահամյան (Ռուսաստան)-1 մլն ԱՄՆ դոլար Ստեփանակերտում դպրոցի կառուցման համար:

Լուիզ Սիմոն Մանուկյան (ԱՄՆ արեւելյան ափ)-500.000 ԱՄՆ դոլար

Սարգիս Հակոբյան (ԱՄՆ արեւելյան ափ)-250.000 ԱՄՆ դոլար

Տիգրան Մովսիսյան (Հայաստան)-140.000 ԱՄՆ դոլար

ՀԲԸՄ «Մանուկյան-Դեմիրճյան դպրոց» (ԱՄՆ արեւմտյան ափ)-115.000 ԱՄՆ դոլար

Լեւոն եւ Գրիգոր Թերմենջյաններ (ԱՄՆ արեւմտյան ափ)-110.000 ԱՄՆ դոլար

Միխայիլ Բաղդասարով (Հայաստան)-100.000 ԱՄՆ դոլար

«Վիվասել» (Հայաստան)-67.000 ԱՄՆ դոլար

Արկադի Օվանեսյան (ԱՄՆ արեւմտյան ափ)-60.000 ԱՄՆ դոլար

Սամվել Ալեքսանյան (Հայաստան)-50.000 ԱՄՆ դոլար

Ռուբեն Հայրապետյան (Հայաստան)-50.000 ԱՄՆ դոլար

Նվիրատվությունները շարունակվում են:

ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՏ 2 ՄԼՆ ԴՈԼԱՐ ԵՆ

Հայաստանյան նվիրատվությունների ցուցանիշը մոտենում է 2 մլն դոլարի սահմանագծին: Այս մասին տեղեկացնում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասարակայնության հետ կապերի բաժինը՝ հավելելով, որ հեռուստամարաթոնի ավարտից հետո էլ հիմնադրամը շարունակում է մեծ թվով նվիրատվություններ ստանալ կազմակերպություններից, ընկերություններից եւ անհատներից: Հիմնադրամի գործադիր վարչությունն արձանագրել է, որ Հայաստանը նման ցուցանիշ նախկինում չէր ունեցել ոչ միայն գումարային մուտքերի, այլեւ անհատների եւ կազմակերպությունների մասնակցության առումով:

Հայաստանում խոշոր նվիրատուների ցանկում են՝

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը՝ 100 մլն դրամ,

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարությունն իր ստորաբաժանումներով՝ 48 մլն 125 հազար դրամ,

«Դ-Տելեկոմը»՝ 40 մլն դրամ,

«Արդշինինվեստբանկը»՝ 15 մլն դրամ,

«Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկը»՝ 25 հազար դոլար,

Հայկական երկաթուղին՝ 11 մլն դրամ,

ՀՀ կենտրոնական բանկը՝ 10 մլն 176 հազար դրամ,

ՀՀ պաշտպանության նախարարությունը եւ անհատապես նախարար Սերժ Սարգսյանը՝ 10 մլն 500 հազար դրամ,

«Մոլիբդեն փրոդաքշընը»՝ 15 հազար դոլար:

5-ական մլն դրամ նվիրել են «Երեւան» հիմնադրամը, «Ֆլեշ» ՍՊԸ-ն, «Անելիք», «Կոնվերս» բանկերը, «Յունիբանկը»: Իսկ 3-ական մլն դրամ էլ նվիրել են Լոռու մարզպետարանը, Հանրապետական կուսակցությունը, «Հայփոստը», ՀՀ ԱԱԾ-ն, Երեւանի բժշկական համալսարանը:

Հիմնադրամից տեղեկացնում են, որ ստացվել են նաեւ այլ չափի նվիրատվություններ ամենատարբեր կառույցներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԼԻԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
DEMOCRATIC LIBERAL (RAMGAVAR) PARTY OF ARMENIA
REPUBLIC COMMITTEE

Հայաստանի Հանրապետություն, ք. Երեւան, Երվանդ Քոչարի 19/6
19/6 Ervand Kochar Street, Yerevan, Republic of Armenia

Tel/Fax 57-23-97 Tel 57-21-15
e-mail: hrak@arminco.com

20.նոյեմբեր 2006թ.
ք. Երեւան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչության որոշման համաձայն, կուսակցությունը մաս կազմեց Համաշխարհային Հայկական Կոնգրեսին, որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ Մոսկվայում 2003 թվականի հոկտեմբերին, հետեւաբար ՀՌԱԿ-ը հանդես եկավ Համաշխարհային Հայկական Կոնգրեսի հիմնադիր կազմակերպության կարգավիճակում:

Ինչպես մեզացած հիմնադիր կազմակերպությունների ղեկավարները, այնպես էլ ՀՌԱԿ-ի ղեկավարությունը մեծ ոգեւորությամբ ընդունեցին նմանատիպ համահայկական կազմակերպության ստեղծման գործընթացը: Չնայած դեմ լինելով այն փաստին, որ համահայկական կառույցի գրանցումը իրականացնելու էր Ռուսաստանի Դաշնության Արդարադատության նախարարությունը, այնուամենայնիվ համազգային կուտակված հարցերը լուծելու առաջնահերթությունը Հայ Ազգի տվյալ հանգրվանին, պատմական զարգացման առումով ավելի կարեւոր համարվեցին:

Այն ինչ տեղի ունեցավ հետագայում՝ անկազմակերպվածություն, անգործություն, կապի իսպառ բացակայում, աշխատանքային գրաֆիկի եւ ոլորտների պատասխանատուների ցուցակի բացակայություն, հիասթափեցնող գործընթացներ էին: Դրան զուգահեռ մամուլից տեղեկություններ էինք ստանում Համաշխարհային Հայկական Կոնգրեսի ղեկավարի այցելությունների եւ հայտարարությունների մասին: Ամենեւին չհանդուրժելով այս գործելաոճը, ՀՌԱԿ ղեկավարությունը բազմիցս դիմել է Համաշխարհային Հայկական Կոնգրեսի ղեկավարությանը տարեկան կատարած աշխատանքների մասին հաշվետվություն ներկայացնելու կապակցությամբ, սակայն մինչ օրս չի ստացվել որեւիցե պատասխան:

Հաշվի առնելով Համաշխարհային Հայկական Կոնգրեսի ղեկավարության ներկայիս գործելաոճը, որը ձգվում է շուրջ երեք տարի, Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը որոշում է.

- դուրս գալ Համաշխարհային Հայկական Կոնգրեսի հիմնադիր կազմից:

Հայաստանի Ռամկավար Ազատական կուսակցության Հանրապետական վարչությունը հայտարարում է, որ այսուհետ չի կրում որեւէ պատասխանատվություն Համաշխարհային Հայկական Կոնգրեսի գործունեության համար:

ՀՌԱԿ Հանրապետական վարչություն

«ՀՌԱԿ-Ը ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՆԳՐԵՍԻ ՀԻՄՆԱԴԻՐ ԱՆԴԱՄ ՉԻ ԵՂԵԼ»

«Անտեղյակությունը ՀՀԿ գործունեությանը չի նշանակում կազմակերպության անգործություն»

Օրերս Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության (ՀՌԱԿ) հանրապետական վարչությունը հանդես եկավ Համաշխարհային հայկական կոնգրեսին (ՀՀԿ) ուղղված մեղադրանքներով, թե այդ կազմակերպությունը հաշվետվություններ չի ներկայացնում, մատնված է անգործության եւ իրեն ՀՀԿ հիմնադիր համարող ՀՌԱԿ-ը չի ցանկանում կիսել պատասխանատվությունը եւ դուրս է գալիս ՀՀԿ-ից: Այս առնչությամբ մեր զրուցակիցն է ՀՀԿ փոխնախագահ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՂԱՅԱՆԸ:

- Պրն Աղայան, ի՞նչ հիմքեր ունի ՀՌԱԿ-ը Համաշխարհային հայկական կոնգրեսին նման մեղադրանքներ ներկայացնելու: Ինչո՞վ է դա պայմանավորված:

- Ուզում եմ միանգամից նշել, որ ՀՌԱԿ-ը երբեւիցե Համաշխարհային հայկական կոնգրեսի հիմնադիր անդամ չի հանդիսացել, քանի որ Համաշխարհային հայկական կոնգրեսը միջազգային հասարակական կազմակերպություն է եւ գրանցվել է Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարության կողմից: Իսկ ՌԴ օրենսդրության համաձայն, քաղաքական կուսակցություններին իրավունք չի վերապահվում դառնալու հասարակական կազմակերպության հիմնադիր անդամ: Դա պարզ ճշմարտություն է, որի մասին դեռեւս 2003 թ. դեկտեմբերին իրազեկվել է նաեւ ՀՌԱԿ-ը: Բնականաբար, ՀՌԱԿ-ը, ինչպես նշված է կուսակցության հայտարարության մեջ, երբեւիցե պատասխանատվություն չի կրել եւ չի կրելու ՀՀԿ գործունեության համար: Իսկ ՀՀԿ-ն իր հերթին պարտավորություն չունի ՀՌԱԿ-ին պաշտոնապես իրազեկել իր գործունեության մասին: Սա պարզ ճշմարտություն է, որի առնչությամբ ծավալվել չեմ ցանկանում: Ինչ վերաբերում է ՀՌԱԿ-ի ՀՀԿ հիմնադիր համագումարին մասնակցությանը, կարող եմ ասել, որ այդ կուսակցության ներկայացուցիչները, իրոք, մասնակցել են թե՛ կազմկոմիտեի, թե՛ համագումարի աշխատանքներին: Ի դեպ,

նշեմ նաեւ, որ ՀՀԿ հիմնադիր համագումարի աշխատանքներին որպես հրավիրվածներ մասնակցել են նաեւ մի շարք այլ կուսակցությունների ներկայացուցիչներ, մինչդեռ նրանցից եւ ոչ մեկը չի ստացել ՀՀԿ հիմնադիր անդամի կարգավիճակ եւ նման հավակնություններով երբեք հանդես չի եկել:

- Թերեւս հասկանալի է, որ ՀՌԱԿ-ը չէր կարող անտեղյակ լինել ՀՀԿ հիմնադիր անդամ չլինելու հանգամանքին: Այդ դեպքում ի՞նչ նպատակ կարող է հետապնդել նման հայտարարությունը:

- Չգիտեմ, թե ինչ հեռահար նպատակ են հետապնդել, բայց կարող եմ ասել, որ հանրապետությունում նախապատրաստվող ընտրությունների նախաշեմին ՀՌԱԿ-ը նման հայտարարությամբ փորձում է հանրությանը հիշեցնել իր գոյության մասին եւ այդ կերպ հայտնվել քաղաքական դաշտում: Կարծում եմ, որ այդ ճանապարհը ազնիվ չէ, քանզի ստացվում է այնպես, որ քաղաքական նպատակներին հասնելու համար նրանք փորձում են ստվեր գցել արդեն գործունեության լայն ասպարեզ դուրս եկած մի այնպիսի միջազգային հասարակական կազմակերպության գործունեության վրա, ինչպիսին Համաշխարհային հայկական կոնգրեսն է:

- Ինչպե՞ս հասկանալ, որ ՀՀԿ-ից «հիասթափված» ՀՌԱԿ-ը ՀՀԿ գործունեությունը որակում է «անկազմակերպվածություն, անգործություն...»: Ավելին, ՀՌԱԿ-ը, իրեն համարելով հիմնադիր անդամ, մեղադրանք է ներկայացնում, թե անպատասխան են մնացել կատարված աշխատանքների հաշվետվություն ստանալու ՀՀԿ-ի ղեկավարությանն ուղղված դիմումները:

- Բնավ կարիք չկա, որ նեղանան, որ հաշվետվություն չենք ներկայացրել, քանի որ արդեն նշեցի, մեր կազմակերպության հիմնադիր անդամ չեն եւ նրանց հաշվետվություն ուղարկելու պարտավորություն չունենք: Բայց ուզում եմ ասել, որ հիմնադիր անդամները մասնակցում են մեր գործունեությանը եւ տեղյակ են տարվող աշխատանքներին: Բացի այդ, ընդունված որոշումների, գործողությունների, ծրագրերի մասին պարբերաբար տեղեկացնում ենք թե հիմնադիր անդամներին, թե ՀՀԿ գլխավոր խորհրդի անդամներին: Ավելին, մայիսին Երեւանում տեղի ունեցավ ՀՀԿ ղեկավար կոլեգիալ մարմնի՝ Գլխավոր խորհրդի հերթական նիստը, որի օրակարգը պերճախոս վկայում է կազմակերպության բազմակողմանի գործունեության մասին: Նիստում նախ եւ առաջ դրված էր Գլխավոր խորհրդի բյուրոյի հաշվետվությունը, որով հանդես եկավ կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը: Հանրապետության զանգվածային լրատվության միջոցները լայնորեն լուսաբանել են Գլխավոր խորհրդի նիստի արդյունքները, իսկ սղագրական հաշվետվությունը ուղարկվել է Գլխավոր խորհրդի անդամներին եւ հիմնադիրներին: Ինչ վերաբերում է ՀՀԿ գործունեությանը, որ ՀՌԱԿ-ը անպատասխանատու կերպով որակում է անգործություն, զարմանք ու ծիծաղ է առաջացնում, որ իրենց քաղաքական գործունյա կուսակցություն համարողներն անգամ լրատվամիջոցներից չեն օգտվել ՀՀԿ գործունեության մասին գոնե թռուցիկ պատկերացում կազմելու համար: Քանի որ հանրապետությունում շատերն են նախապատրաստվում ընտրություններին, չեմ կասկածում, կգտնվեն եւս մարդիկ, որոնք կրկին անդրադառնալով ՀՀԿ կամ նրա նախագահի գործունեությանը՝ կփորձեն իրենց վրա հրավիրել հանրության ուշադրությունը: Ուստի նրանց օգնելու նպատակով կփորձեմ հակիրճ նշեմ ՀՀԿ գործունեության մի քանի դրվագներ միայն: Երեք տարի է, ինչ գործում է ՀՀԿ-ն: Երեք տարին ընդամենը ակնթարթ է կոնգրեսի նման մասշտաբային կազմակերպության համար: Բայց այդ ժամանակահատվածում

կազմակերպությունը դուրս է եկել կայացման լայն ճանապարհ եւ իր գործունեությամբ հասել լուրջ հաջողությունների: Կազմակերպության գլխավոր նպատակներից մեկը հայության համախմբումն է ազգային շահերի շուրջը, իսկ այդ շահերի մեջ կան առաջնահերթություններ. նպաստել նորանկախ Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման եւ պետականության ամրապնդման, ցեղասպանության միջազգային ճանաչման եւ դրա հետեւանքների վերացման, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի, սփյուռքում հայապահպանության գործընթացներին: ՀՀԿ ստեղծման օրից մի քանի ամիս անց ի բարօրություն Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, Երեւանում հրավիրվեց Միջազգային հայկական տնտեսական համաժողով Արտաքին քաղաքական կապերի համառուսաստանյան ասոցիացիայի աջակցությամբ: Համաժողովի աշխատանքներին մասնակցեցին ավելի քան 400 գործարարներ, փոքր եւ միջին բիզնեսի ներկայացուցիչներ Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Շվեյցարիայից, Իսրայելից, Բելգիայից, Իտալիայից, Հարավային Կորեայից, Հունգարիայից, Սլովակիայից, Ուկրաինայից, Վրաստանից եւ այլ երկրներից, կնքվեցին մի շարք գործարքներ ու պայմանագրեր: 2005 թ.-ի հոկտեմբերին ՀՀԿ մասնակցությամբ Երեւանում տեղի ունեցավ հայ-ռուսաստանյան գործարարների համաժողովը, որի նպատակն էր գործարար կապերի ամրապնդումը, աշխատատեղերի ստեղծումը: Ուսումնական հաստատությունների համակարգչայնացումը ռազմավարական նշանակություն ունեցող լուրջ խնդիր համարելով, ՀՀԿ-ն հանդես եկավ «Հայաստանի եւ Արցախի դպրոցների համակարգչայնացմանը՝ համազգային հոգածություն» շարժման նախաձեռնությամբ, որի շնորհիվ անցած երեք տարիների ընթացքում ՀՀԿ կողմից Հայաստանի եւ Արցախի մոտ 700 դպրոցներում, բուհերում եւ այլ ուսումնական հաստատություններում ստեղծվել են համակարգչային դասարաններ: Հարյուրավոր համակարգիչներ են ստացել նաեւ ՀՀ զինվորական ստորաբաժանումները, բազմաթիվ այլ կազմակերպություններ: Մի խոսքով, երեք տարում 7000 համակարգիչ է բաժանվել, որի արժեքը միլիոնավոր դոլարների է հասնում: Եվ սա չի վերաբերում միայն Հայաստանին եւ Արցախին: Համակարգչային դասարաններ են բացվել նաեւ Բուենոս Այրեսի, Սան Պաուլուի հայկական դպրոցներում: Անհրաժեշտ աշխատանք է կատարվել հանրապետության սոցիալական կարիքավոր խավերին օգնելու ուղղությամբ: Միայն փախստականների համար ՀՀԿ-ն, իր ղեկավարի միջոցներով, գնել է 130 բնակարան եւ սեփականության իրավունքով անհատույց տրամադրել փախստականների ընտանիքներին: Ավելի քան 350 թոշակառուներ ամեն օր անվճար սնունդ են ստանում բարեգործական ճաշարանից: Արցախը եւս անմասն չի մնացել ՀՀԿ գործունեությունից: Բացի դպրոցների համակարգչայնացումից, գումարներ են ներդրվել սառնարանային տնտեսության ստեղծման գործում: ՀՀԿ միջոցների հաշվին Ստեփանակերտում կառուցվում է նոր դպրոց՝ 500 աշակերտի համար: Այս բնագավառում մեր բերած թվարկումը կատարվածի միայն մի մասն է:

- Այս ծրագրերին տեղեկանում ենք մամուլից, նաեւ վերջին 3-4 տարիների ընթացքում ՀՀԿ եւ ՌՀՄ կատարած աշխատանքները ներկայացնող «Հայաստան-սփյուռք. խորհրդաժողովից-խորհրդաժողով» պարբերականից: Ուրիշ ի՞նչ բնագավառներում է իր գործունեությունը ծավալում Համաշխարհային հայկական կոնգրեսը:

- Համաշխարհային հայկական կոնգրեսի գործունեության նպատակներից առաջնային է նաեւ մասնակցությունը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ

նրա հետեւանքների հաղթահարմանն առնչվող հարցերին: Այսօր Մոսկվայում ստեղծվել եւ գործում է Միջազգային իրավունքի եւ քաղաքագիտության հայկական ինստիտուտը, որ դարձել է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցերի ուսումնասիրման յուրահատուկ կենտրոն: Այդ ինստիտուտի նախաձեռնությամբ 2004 թ. մայիսին Երեւանում տեղի ունեցավ գիտագործնական կոնֆերանս՝ «Ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցում» թեմայով, որի արդյունքում ձեւավորվեց ցեղասպանության հարցով զբաղվող ՀՀԿ փորձագիտական հանձնաժողովը՝ ոչ միայն հայ, այլեւ Իսրայելի, Գերմանիայի, Ավստրիայի, ԱՄՆ-ի եւ այլ երկրների ճանաչված փորձագետների կազմով: Փորձագետների խորհուրդը պարբերաբար ցեղասպանության հարցի վերաբերյալ լրատու է հրատարակում: Ի թիվս տասնյակ այլ հրատարակությունների, առաջին անգամ ընթերցողի սեղանին է դրվել Յուրի Բարսեղովի «Հայերի ցեղասպանությունը» արխիվային մինչ այդ չհրատարակված նյութերով եռահատոր աշխատությունը: Հանձնաժողովը, որի նիստերը տեղի են ունենում ամեն տարի, ցեղասպանության հարցի առնչությամբ իր կոնկրետ առաջարկներն է ներկայացրել ՀՀ իշխանություններին: Սփյուռքում հայապահպանության գործին մեծ նպաստ է բերում կոնգրեսի «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» լավագույն գրական ստեղծագործական աշխատանքի միջազգային մրցույթը, որին միայն վերջին երկու տարում մասնակցել են շուրջ 1000 դպրոցականներ եւ ուսանողներ Հայաստանից ու սփյուռքից: Հանրությանն արդեն հայտնի է նաեւ ՀՀԿ նախագահ Արա Աբրահամյանի գործունեությունը Հասարակածային Գվինեայից հայ օդաչուներին ազատելու, նաեւ ռուս նավաստիներին Նիգերիայից Ռուսաստան վերադարձնելու ուղղությամբ: Լայնածավալ աշխատանք է տարվում աշխարհում խաղաղության հաստատման համատեքստում քաղաքակրթությունների երկխոսության կազմակերպման եւ իրականացման կապակցությամբ: Այսօր ՀՀԿ կառուցվածքում արդեն գործում են Երիտասարդական կազմակերպությունների, Լրատվական միջոցների ասոցիացիաները, որոնց նպատակն է համախմբել երիտասարդությանը, ստեղծել համահայկական տեղեկատվական դաշտ: ՀՀԿ աջակցությունը Գիտությունների ազգային ակադեմիային, Գրողների միությանը, պատերազմի վետերաններին: Կարծում եմ, ասվածն արդեն անկեղծ հետաքրքրությունները բավարարելու համար լիուլի բավական է:

- Ի՞նչ կարելի է ասել ՀՌԱԿ-ի հանրապետական վարչությանը, որ, լավագույն դեպքում, անտեղյակ հիմնադիր անդամ չլինելու հանգամանքից, իրեն ազատում է նաեւ ՀՀԿ գործունեության համար պատասխանատվությունից:

- Կցանկանայի, որ նման հայտարարությունները բովանդակեին ճշմարտությունը: Իսկ ինչ մնում է մեր գործունեության համար պատասխանատվությանը, կարող եմ ասել, որ ՀՌԱԿ-ը ի սկզբանե ազատ է այդ հոգսից եւ կարող է բոլորովին չանհանգստանալ: Միայն ընդգծեմ, որ նրանք, ովքեր աշխատում են ՀՀԿ կազմում եւ կազմակերպության հետ, գործում են արդյունավետ եւ պատրաստակամ են, արժանի են կրելու ինչպես ՀՀԿ գործունեությամբ ձեռք բերված հաջողությունների դափնիները, այնպես էլ դրա պատասխանատվությունը:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱ